9) Վերահսկողության միջոցին ստացած տեղեկությունների ու եզրակացությունների հիման վրա՝ Պետական Վերահսկիչը իւրաքանչիւր տարեայ նոյեմ. 1-ին Պարլամենտին ներկայացնում է՝ ա. տեղեկագիր ֆինանսական նախահաշիւների և նախընթաց բիւջէտային տարեշրջանի պետական ելևմտից կատարման մասին և բ. տեղեկագիր Հանրապետության շարժական ու անշարժ գոյքի և դրա յաւելման կամ նւազման մասին:

Յանոթ. Տեղեկագրին կցած է լինելու բացատրագիր կառավարության ֆինանսա-տնտեսական գործողությունների և պետական ելևմտից հաշէտւության վերաքննության հետևանքների մասին:

10) Պետական Վերահսկողության անձնական կազմը բաղկացած է Պետական Վերահսկիչից, Վերահսկողության գործերի Կառավարչից, Վերաքննության մասի Վարիչից, Դիւանապետից, Աւագ Վերաքննիչից, Վերաքննիչներից ու նրանց օգնականներից, հաշէտեսից, քարտուղարից և դրասենեակային պաշտօնեաներից:

11) Պետական Վերահսկողության ղեկավարությունը պատկանում է Պետական Վերահսկիչին, որը ընտրւում է Պարլամենտի կողմից և որը միաժամանակ իրաւունք ունի մասնակցել Նախարարների Խորհրդի բոլոր նիստերին խորհրդակցական ձայնով, իսկ Պարլամենտի նիստերին այն բոլոր հիմունքներով, ինչ և նախարարները:

12) Պետական Վերահսկիչն իրաւունք ունի՝—դուրս չգալով շտատներով նախատեսուած պաշտօնեաների թիւ և նախահաշիւով սահմանուած ռոճիկների ու այլ դումարների սահմաններից՝—հիմնել իր պաշտօնեաների տեսակ կազմից՝ Նախարարություններին և Գլխաւոր Վարչություններին կից և կամ դաշնազան վայրերում ներկայացուցչություններ, որոնք, համաձայն Պետական Վերահսկիչի հրահանգներին ու ցուցմունքներին, հսկողություն են ունենալու առանձին վարչությունների կամ թէ չէ միևնոյն վայրում գործող մի քանի վարչությունների վրա:

13) Պետական Վերահսկողության գործերի Կառավարիչը անմիջական գործակիցն ու օգնականն է Պետական Վերահսկիչի և փոխարինում է նրան՝ վերջինիս բացակայության դէպքում, օգտւելով Վերահսկիչի բոլոր իրաւունքներից, առանց, սակայն, իրաւունք ունենալու մասնակցելու Նախարարների Խորհրդին:

14) Վերահսկողության մասի Վարիչը հետևում է վաւերագրային ու փաստական վերաքննությունների գործավարության և հսկում է դրանց օրինական, կանոնաւոր, յաջող և արագ կատարման վրա:

15) Դիւանապետը տանում է Պետական Վերահսկողության վարչական ու տնտեսական գործավարությունը, հանդիսանալով միաժամանակ Վերահսկողության Իրաւագէտը:

16) Աւագ Վերաքննիչները՝—Վերաքննիչների ու սրանց օգնականների, այլ և հաշէտես պաշտօնեաների օգնությամբ կատարում են վերաքննության ամբողջ գործը և կազմում իրենց վերաքննած հաշէտությունների վերաբերմամբ զեկուցումներ ու տեղեկագրեր:

Յանոթ. Ցիշեալ պաշտօնեաների իրաւասությունը և գործունէության կարգը որոշւում են Պետական Վերահսկիչի յատուկ հրահանգներով:

17) Պետական Վերահսկողության պաշտօնեաներին՝ իրենց պաշտօնի կատարման վերաբերող յանցանքների համար Կառավարությունը չի կարող ինքնուրոյն կերպով պատասխանատուության ենթարկել. այդ պաշտօնեաները պատասխանատու են միայն Պետական Վերահսկիչի և Դատական իշխանության առաջ: Դատական իշխանության կողմից քրէական հետապնդում յարուցելիս՝ անմիջապէս տեղեկացնելու է Պետական Վերահսկիչին: